Կարգապահական գործ թիվ ԿԳ-25076

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Մարիամ Աբրահամյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին (արտոնագիր՝ թիվ 490), **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Վարեն Ավետիսյանի ներկայացուցիչ Լիլիա Կարապետյանը **(այսուհետ՝ Դիմող)**, դիմելով Պալատ, հայտնել է, որ Վարեն Ավետիսյանի և Հեղինե Կարապետյանի շահերը պաշտպանելու համար դիմել են փաստաբան Մարիամ Աբրահամյանին, ինչի կապակցությամբ նաև կատարել են համապատասխան վճարումներ Մարիամ Աբրահամյանի մայրիկի բանկային քարտին:

Դիմողը, նկարագրելով գործերի նախապատմությունը, հայտնել է, որ թիվ ԿԴ/2431/02/21 և ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործերով փաստաբանը ներկայացրել է գործով պատասխանող Վարեն Ավետիսյանի շահերը, սակայն այդ մասով «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում նշում առկա չի եղել: Նշված գործերով համապատասխանաբար 31.10.2024թ. և 14.03.2025թ. կայացվել են վճիռներ, սակայն փաստաբանը դրանք չի բողոքարկել և տեղյակ չի եղել գործերի ընթացքի մասին:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբանը ներկայացրել է Վարեն Ավետիսյանի շահերը նաև թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով, որով վերջինս հանդիսացել է հայցվոր: Նշված գործով փաստաբանը պետք է կատարեր հայցի առարկայի փոփոխություն, սակայն 10.07.2024թ. և 16.09.2024թ. հրավիրված դատական նիստերին փաստաբանը չի ներկայացել և չի ներկայացրել որևէ միջնորդություն, ինչի արդյունքում

գործի վարույթը կարճվել է, սակայն այդ գործով ևս դատարանի որոշումը չի բողոքարկել:

Դիմողի պնդմամբ՝ նշված ժամանակահատվածում նա մշտապես կապի մեջ է եղել իր փաստաբանի հետ՝ նրան փոխանցելով կայացված դատական ակտերի վերաբերյալ տեղեկությունները: Փաստաբանը հայտնել է դրանց բողոքարկման պատրաստակամություն, սակայն իրականում չի իրականացրել բողոքարկում, իսկ հետագայում նաև խուսափել է պատասխանել Դիմողի զանգերին և հաղորդագրություններին:

Ի լրումն նախորդ բացատրության՝ Դիմողը 13.06.2025 թվականի գրությանը կից ներկայացրել է իր և փաստաբան Մարիամ Աբրահամյանի միջև առկա նամակագրությունը, որոնց բովանդակությունից հետևում է, որ Դիմողը սնանկ ճանաչվելուց հետո ակնկալել է որոշակի գործողությունների կատարում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Մարիամ Աբրահամյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 20.08.2025թ. Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 25.08.2025թ. բացատրությամբ, ըստ էության, պնդել է նախկինում արտահայտած դիրքորոշումը և ներկայացրել է ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Վարեն Ավետիսյանի ներկայացուցիչ Լիլիա Կարապետյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.08.2025թ. Դիմողին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստին ներկայանալով՝ Փաստաբանը ցանկացել է հայտնել դիրքորոշում և այդ կապակցությամբ ներկայացնելով ապացույցներ, որոնք մինչ այդ՝ ներառյալ կարգապահական վարույթի հարուցման հարցի լուծման և նախապատրաստման փուլում չեն ներկայացվել ի ապահովումն Պալատի նախագահի և սպասարկող անձնակազմի աշխատակցի պահանջների:

Ի պատասխան Հանձնաժողովի հարցի առ այն, թե ինչու ապացույցները չեն ներկայացվել սահմանված ժամկետում և կարգով, Փաստաբանը հայտնել է, որ ունեցել է մեծ աշխատանքային ծանրաբեռնվածություն և ցանկացել է ներկայացնել ապացույցները հենց Հանձնաժողովին:

Փաստաբանը հայտնել է, որ վարչական գործի վարույթը կարճվելուց հետո

անգործություն չի ցուցաբերել և այդ դատական ակտի հետ համաձայն չի եղել, որպիսի դիրքորոշումն արտահայտել է վերաքննիչ բողոքում:
Փաստաբանն ըստ էության պնդել է, որ Դիմողին և նրա ներկայացուցչին մատուցել է մի շարք ծառայություններ և ամբողջ ծավալով՝ հավելելով, որ Դիմողի ներկայացուցիչը փաստացի խուսափել է ներկայանալ գրասենյակ պայմանագիր կնքելու համար:

Փաստաբանն ի պատասխան Հանձնաժողովի հարցերին հայտնել է, որ վարչական գործով չի ունեցել պարտավորություն բողոքարկելու դատական ակտը, իսկ բոլոր գործողությունները, որոնք կատարվել են Փաստաբանի կողմից, կատարվել են Դիմողին և նրա ներկայացուցչին օգնելու նկատառումներից ելնելով:

Փաստաբանը Հանձնաժողովի հարցին ի պատասխան հայտնել է, որ «լիազորության» ներքո դիտարկում է համապատասխան պայմանագրի առկայությունը, որի ստորագրումից Դիմողի ներկայացուցիչը խուսափել է:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 30.06.2025 թվականի թիվ 187-Ա/ԿԳ-25076 որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

18.07.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 03.09.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-9-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 03.09.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 29.10.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Մարիամ Աբրահամյանը ստանձնել է Դիմող Վարեն Ավետիսյանի

իրավունքների պաշտպանությունը թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով:

Սույն փաստը հաստատվում է *Դիմողի բացատրությամբ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքներով, ինչպես նաև նշված փաստը չի վիճարկվել Փաստաբանի կողմից:*

2. Թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործը կարճվել է հետևյալ հիմնավորմամբ. *«Դատարանը վարչական գործում առկա տվյալների հիման վրա 2024 թվականի հունիսի 12-ի դատական նիստում արձանագրել է, որ 1991 թվականի մարտի 22-ի թիվ 238 որոշում գոյություն չունի, հետևաբար Դատարանը չի կարող ստուգել գոյություն չունեցող վարչական ակտի իրավաչափությունը:* ***Հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ հայցվոր կողմի նպատակն է վիճարկել 2009 թվականի հունվարի 30-ի քաղվածքի հիման վրա 2009 թվականի փետրվարի 5-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և միջնորդել է ժամանակ տրամադրել հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու գրավոր միջնորդություն ներկայացնելու համար: Դատարանը հայցի առարկան փոփոխելու հնարավորությունն ապահովելու նպատակով 2024 թվականի հուլիսի 10-ին հրավիրել է ևս մեկ նախնական դատական նիստ, սակայն հայցվոր կողմը չի ներկայացել դատական նիստին, ինչպես նաև որևէ ձևով հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու միջնորդություն չի ներկայացրել: Պատշաճ ծանուցված լինելով նաև 2024 թվականի սեպտեմբերի 16-ի դատական նիստի վայրի և ժամանակի մասին՝ հայցվոր կողմը կրկին չի ներկայացել դատական նիստին:*** *Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ ապահովվել է հայցվորի՝ հայցի առարկան փոխելու հնարավորությունը, մինչդեռ հայցվորը նման միջնորդություն չի ներկայացրել: Հետևաբար վարչական գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա է կարճման, քանի որ գոյություն չունեցող ակտի կապակցությամբ վեճ որևէ դատարանում չի կարող քննվել:»:*

Սույն փաստը հաստատվում է *թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

3. Թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով Դատարանի 16.09.2024թ. որոշումը Փաստաբանի կողմից չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: ***Սույն փաստը հաստատվում է*** *թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև Վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավարի գրության պատճենով:*

4. Թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով 31.10.2024թ. Դատարանը վճռել է.

«1. Համեստ Իրավի Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Վարեն Մաքսիմի Ավետիսյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին, բավարարել.

1.1 Վարեն Մաքսիմի Ավետիսյանից հօգուտ Համեստ Իրավի Հովհաննիսյանի բռնագանձել 4.258.345 ՀՀ դրամ, որից 3.700.000 ՀՀ դրամը՝ որպես գույքին պատճառված վնասի գումար, իսկ 558.345 ՀՀ դրամը՝ տոկոսագումար:

1.2. Սկսած 04.06.2022 թվականից՝ 3.700.000 ՀՀ դրամի նկատմամբ մինչև պարտավորության ամբողջական կատարման օրը Վարեն Մաքսիմի Ավետիսյանից հօգուտ Համեստ Իրավի Հովհաննիսյանի բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ համաձայն հանձնարարական

ժամանակահատվածների համար << կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:»:

Սույն փաստը հաստատվում է *թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

5. Թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով Դատարանի 30.10.2024թ. վճռում նշված է հետևյալը. «*Պատասխանողին դատավարական փաստաթղթերն ուղարկվել են սահմանված կարգով, վերջինիս պարզաբանվել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և պատասխան չներկայացնելու դեպքում՝ նույն օրենսգրքի 139-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքների մասին: Պատասխանողի կողմից օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հայցադիմումի պատասխան, նյութահրավական պահանջներ չեն ներկայացվել:»:*

Սույն փաստը հաստատվում է *թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

6. Թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով Դատարանի 30.10.2024թ. վճիռը Փաստաբանի կողմից չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

Սույն փաստը հաստատվում է *թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի գրության պատճենով:*

7. Թիվ ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործով Դատարանի 14.03.2025թ. վճիռը Փաստաբանի կողմից կրկին չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

Սույն փաստը հաստատվում է *թիվ ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործով «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի գրության պատճենով:*

8. Թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով Փաստաբանն ունեցել է պարտականություն բողոքարկելու նշված գործերով կայացված վճիռները և գործի վարույթը կարճելու որոշումը:

Սույն փաստը հաստատվում է *03.06.2022 թվականին տրված լիազորագրի, Դիմողի կողմից ներկայացված նամակագրությունների լուսապատճեններով:*

Միաժամանակ Փաստաբանից պահանջվել է ապացույցներ վերը նշված գործերով բողոքարկելու պարտականություն չունենալու վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

9. Դիմողը փաստաբանից պահանջել է տեղեկություն գործերի ընթացքի, ինչպես նաև ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ: Սակայն փաստաբանը պատշաճ կերպով չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին և չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Սույն փաստը հաստատվում է *Դիմողի ներկայացուցչի և Փաստաբանի նամակագրության լուսապատճեններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մարիամ Աբրահամյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ. թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում Փաստաբանն ունի 3 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է

դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Մարիամ Աբրահամյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու և իրեն հետաքրքրող հարցերին չպատասխանելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր Դիմողի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմող՝ Վարեն Ավետիսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով, ինչի կապակցությամբ Փաստաբանին 03.06.2022 թվականին տրվել էր լիազորագիր՝ 3 տարի ժամկետով:

Ըստ այդմ, փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի բացակայության պայմաններում, տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կատարել է որոշակի գործողություններ Դիմողի անունից թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով, սակայն հետագայում

Փաստաբանը նշված գործերի շրջանակներում չի մասնակցել որոշ դատական նիստերին, իսկ կայացված դատական ակտերի դեմ չի ներկայացրել բողոքներ:

Մասնավորապես՝

թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով 31.10.2024 թվականին կայացված (հրապարակվել է՝ 17.12.2024 թվականին) վճռով պատասխանող՝ Վարեն Ավետիսյանի դեմ ներկայացված հայցը բավարարվել է, սակայն չի բողոքարկվել,

թիվ ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործով 14.03.2025 թվականին կայացված (հրապարակվել է՝ 14.03.2025 թվականին) վճռով պատասխանող՝ Վարեն Ավետիսյանի դեմ ներկայացված հայցը բավարարվել է, սակայն չի բողոքարկվել,

թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով 16.09.2024 թվականին կայացված (հրապարակվել է՝ 27.09.2024 թվականին) որոշմամբ գործն ըստ Վարեն Ավետիսյանի հայցի դատարանի կողմից կարճվել է այն հիմնավորմամբ, որ չի կարող ստուգվել գոյություն չունեցող վարչական ակտի իրավաչափությունը, ինչի պատճառով Փաստաբանը խնդրել է տրամադրել ժամանակ հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու գրավոր միջնորդություն ներկայացնելու համար, սակայն այդպես էլ չի ներկայացել 10.07.2024 և 16.09.2024 թվականին նշանակված դատական նիստերին և չի ներկայացրել որևէ միջնորդություն: Նշված որոշումը Փաստաբանը ևս չի բողոքարկել:

Հանձնաժողովը հատուկ ընդգծում է, որ թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով քննարկման է ենթակա միայն 16.09.2024 թվականին կայացված որոշումը չբողոքարկելու վարքագիծը:

Դիմողը Փաստաբանից հայցել է տեղեկություն գործերի ընթացքի և դրանցով կայացած դատական ակտերը բողոքարկելու վերաբերյալ, սակայն Փաստաբանը պատշաճ չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատշաճ չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովն, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշների առկայության մասով, արձանագրում է՝

- **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական*

պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Վկայակոչած կանոնների վերլուծությունից հետևում է նաև, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդ կապակցությամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքները և օրինական շահերը բարեխիղճ և ժամանակին պաշտպանելուց բացի, սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք նա պետք է իրականացնի հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Այս համատեքստում, Հանձնաժողովը նախ հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանից պահանջվել է բացատրություն նախ Դիմողի դիմումի վերաբերյալ՝ կարգապահական վարույթի հարուցման հարցի լուծման փուլում, որի համար սահմանված ժամկետը կազմում է 1 ամիս, ինչպես նաև վարույթ հարուցումից և Պալատի նախագահի որոշման մասին ծանուցումից հետո՝ ապացույցների հավաքագրման և եզրակացության կազմման նպատակով կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի կողմից, որի համար սահմանված ժամկետը կազմում է 2 ամիս:

Հանձնաժողովը փաստում է, որ երկու դեպքում էլ, Փաստաբանը պատշաճ ծանուցված լինելով թե դիմումի, թե Պալատի նախագահի որոշման, թե Աշխատակցի բացատրության պահանջի մասին, չի ներկայացրել որևէ բացատրություն կամ ապացույց իրեն վերագրվող վարքագծում կարգապահական խախտման հատկանիշների բացակայությունը հիմնավորելու համար: Դեռ ավելին, Հանձնաժողովի նիստին ներկայանալով հայտնել է դիրքորոշում առ այն, որ ցանկանում է ներկայացնել բացատրություն և այն հիմնավորող ապացույցներ, սակայն չի միջնորդել հարգելի համարել ապացույցները ներկայացնելու ժամկետի բացթողումը: Այս առումով, Փաստաբանը միայն հայտնել է, որ ունեցել է աշխատանքային մեծ ծանրաբեռնվածություն, իսկ այն պահի դրությամբ առկա էին հարուցված երկու այլ կարգապահական վարույթներ, որոնց մասով ներկայացնում էր բացատրություններ:

Հանձնաժողովը ընդունելի չի կարող համարել Փաստաբանի նման հիմնավորումը, առավել ևս այն դեպքում, երբ վերջինս ունեցել է բավականաչափ ժամանակ առնվազն ապացույցներ ներկայացնելու համար:

Ըստ այդմ, Հանձնաժողովն, անդրադառնալով գործում առկա ապացույցներին և դրանց հաշվառմամբ Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությանը, արձանագրում է, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, բոլոր դեպքերում պարտավոր էր բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբեր՝ ապահովելով հանձնարարության արդյունավետ, արագ և ժամանակին կատարումը:

Մասնավորապես, Փաստաբանը պետք է ներկայացներ Դիմողի շահերը ու պաշտպաներ նրա իրավունքները թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով, ինչի կապակցությամբ Փաստաբանին տրվել էր լիազորագիր:

Ընդ որում, Հանձնաժողովը քննարկման առարկա է դարձնում ոչ թե Փաստաբանի կողմից այդ գործերի շրջանակներում ձեռնարկված բոլոր գործողությունների արդյունավետությունը, այլ ընդամենը այն գործողությունները, որոնք Փաստաբանը պարտավոր էր ձեռնարկել առնվազն Դիմողի շահերի ու իրավունքների պաշտպանության հաջորդականության ապահովման նպատակով:

Մասնավորապես, քննարկելով Փաստաբանի մասնակցությամբ յուրաքանչյուր գործով չկատարված գործողությունները, Հանձնաժողովն ևս մեկ անգամ ընդգծում է, որ՝

- Թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործը բողոքարկվում էր գոյություն չունեցող ակտ, ինչի կապակցությամբ Դատարանը կատարել էր մատնանշում, իսկ Փաստաբանն, իր հերթին, միջնորդել է ժամանակ տրամադրել հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու գրավոր միջնորդություն ներկայացնելու համար, սակայն չի ներկայացել 2024 թվականի հուլիսի 10-ին և սեպտեմբերի 16-ի դատական նիստերին և չի ներկայացրել իր իսկ կողմից մատնանշված միջնորդությունը, ինչի արդյունքում գործի

վարույթը Դատարանի 16.09.2024 թվականի որոշմամբ կարճվել է, իսկ Փաստաբանը չի բողոքարկել այդ որոշումը, ինչի արդյունքում այն ստացել է օրինական ուժ:

• Թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով Դատարանի 31.10.2024 թվականի վճռով բավարարվել է Համեստ Իրավի Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Դիմողի՝ վնասի հատուցման պահանջի մասին, սակայն Փաստաբանը վճիռը ևս չի բողոքարկել, ինչի արդյունքում այն ստացել է օրինական ուժ:

• Թիվ ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործով Դատարանի 14.03.2025 թվականի վճռով բավարարվել է Համեստ Իրավի Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Դիմողի՝ հողամասն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու և նշված հողամասի վրա կառուցված շինությունը քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին, սակայն Փաստաբանն այն ևս չի բողոքարկվել սահմանված ժամկետում: Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների համաձայն վճիռը Դիմողի կողմից բողոքարկվել է վերաքննիչ դատարան, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 16.07.2025 թվականի որոշմամբ մերժել է դրա ընդունումը և Դիմողի միջնորդությունը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ *«Վարեն Ավետիսյանը վճիռը ստացել է 18.03.2025 թվականին: ... Վարեն Ավետիսյանի ներկայացուցիչ Մարիամ Աբրահամյանն այն ստացել է 24.03.2025 թվականին: Այսինքն՝ վերոնշյալ փոստային հավաստագրերից հետևում է, որ վճիռը ստացել է թե՛ պատասխանողը, և թե՛ նրա ներկայացուցիչը, միաժամանակ նշված հավաստագրերում առկա տեղեկությունները հերքող ապացույցներ առկա չեն: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ հիմնավոր չէ միջնորդության մեջ նշված այն փաստարկը, թե դատական ակտը բողոքաբերը չի ստացել: Հարկ է նաև նշել, որ դատական ակտը հրապարակվել է 14.03.2025 թվականին: Բողոքը փոստի միջոցով ներկայացվել է 17.06.2025 թվականին՝ սահմանված 1-ամսյա ժամկետի խախտմամբ: Ընդ որում, բողոքարկման ժամկետի հոսքը վճիռը պատասխանողի կամ նրա ներկայացուցչի կողմից (համապատասխանաբար 18.03.2025 թվականից կամ 24.03.2025 թվականից) ստանալու պահից հաշվարկելու դեպքում ևս նշված ժամկետը բաց է թողնվել:»:*

Այս հաշվառմամբ, Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանն, ունենալով գործող լիազորագիր, պարտավոր էր առնվազն ձեռնարկեր իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովեր կայացած դատական ակտերի բողոքարկումը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը որևիցե կերպ չի կարող հիմնավոր համար Փաստաբանի պնդումն այն մասին, որ կնքված պայմանագրի բացակայության պարագայում ինքը չի ունեցել պարտավորություն բողոքարկելու կայացված դատական ակտերը, քանի որ պայմանագրի բացակայությունը ինքնին չի կարող վկայել այն մասին, որ Փաստաբանը կարող էր չբողոքարկել այդ ակտերը, առավել ևս այն դեպքում երբ ունեցել է ընդհանուր լիազորագիր, որը այդ պահի դրությամբ եղել է ուժի մեջ:

Հանձնաժողովը ընդգծում է, որ պայմանագրի կնքումն անհրաժեշտ է փաստաբան-վստահորդ հարաբերություններում կանխատեսելիություն և որոշակիություն ապահովելու համար, սակայն այն դեպքում, երբ չի կնքվում պայմանագիրը, պետք է հաշվի առնել լիազորագրի առկայությունը և դրա բովանդակությունը, ինչպես նաև Փաստաբանի և վստահորդի միջև առկա պայմանավորվածությունները՝ գրավոր ապացույցի նամակագրության հաշվառմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկում անդրադառնալով պարտությունների ծագման հիմքին, գտել է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: ***Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի ուժով ներկայացուցիչը պարտավոր է պատշաճ իրականացնել լիազորագրով սահմանված լիազորությունները՝ պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պարագայում վերջինս իր վրա կրում է դրա արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ թվում նաև՝ պատճառված վնասի ռիսկը (տե՛ս, Քարոլին Բաղումյանն ընդդեմ Նունուֆար Հովհաննիսյանի թիվ ԵԿԴ/1447/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):***

Ըստ այդմ, Փաստաբանին տրված լիազորագրի համաձայն, վերջինս, ի թիվս այլնի, լիազորված էր ոչ միայն հանդես գալու ՀՀ դատական բոլոր ատյաններում՝ օժտված լինելով ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված լիազորություններով, այլ նաև բողոքարկել դատարանի որոշումներն ու վճիռները: Դատական գործերով նշված լիազորագիրն առկա էր և դադարեցված չէր Դիմողի կողմից, իսկ Փաստաբանն իր հերթին չի անդրադարձել նշված գործերով դատական ակտերի կայացումից հետո իր լիազորությունների դադարեցման հարցին:

Բացի այդ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանի և Դիմողի ներկայացուցչի միջև առկա նամակագրությունից հետևում է, որ Դիմողի ներկայացուցիչը տեղեկատվություն է հայցում վարչական գործի ընթացքից, մասնավորապես դատական ակտը բողոքարկելու մասով, սակայն փաստաբանը չի պատասխանել դիմումներին և խուսափել է արտահայտել իր դիրքորոշումը նշված հարցի շուրջ:

Ի հավելումն վերը նշվածի՝ Դիմողի ներկայացուցիչը նաև խնդրել է փաստաբանին ներկայացնել հարցում ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ գործի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, սակայն այդ դիմումն ևս մնացել է անպատասխան: Վերջապես, Դիմողի ներկայացուցչի կողմից ուղարկված հարցմանն ի պատասխան վերջինս ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմից ստացել է գրություն, ըստ որի՝ թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով կայացված դատական ակտի դեմ 23.05.2025 թ. դրությամբ վերաքննիչ բողոք ներկայացված չէ:

Բացի այդ, Դիմողը ստացել է գրություն նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմից, համաձայն որի՝ 22.05.2025 թ. դրությամբ թիվ ԿԴ/2431/02/21 և ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոքներ դատարան չեն մուտքագրվել:

Առկա պայմաններում, Հանձնաժողովը հարկ է համարում նաև արձանագրել, որ սպասարկող անձնակազմի Աշխատակցի կողմից Փաստաբանից դեռևս 20.08.2025 թվականին պահանջվել է ներկայացնել ապացույց թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով դատական ակտերը բողոքարկելու կամ նման պարտականություն չունենալու վերաբերյալ ապացույց, սակայն Փաստաբանը որևէ ապացույց չի ներկայացրել՝ ոչ կայացված դատական ակտերը բողոքարկած լինելու, ոչ էլ բողոքարկման պարտականության բացակայության մասով:

Հանձնաժողովն այս համատեքստում արձանագրում է նաև, որ փաստաբանը պետք է կիրառեր օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: **Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չեն կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց, մինչդեռ սույն դեպքում նույնիսկ ձևական առումով Փաստաբանը որևէ գործողություն չի ձեռնարկել դատական ակտերը բողոքարկելու ուղղությամբ:**

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրություններ և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

- **Կանոնագրքի 3.6.1 ենթակետերի խախտման մասով**

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Սույն պարագայում հաստատված է համարվում այն փաստը, որ Փաստաբանը կանոնավորապես չի պատասխանել Դիմողի նամակներին, կանոնավորապես չի

տրամադրել տեղեկություններ գործի ընթացքի մասին, չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին. այս ամենը հաստատվում է Դիմողի ներկայացրած նամակագրությամբ, բացի դա՝ Փաստաբանը չի ներկայացրել հակառակի մասին վկայող որևէ ապացույց:

Նամակագրությունից հետևում է, որ Դիմողը պարբերաբար ուղարկում էր նամակներ հայցելով տեղեկություններ գործերի ընթացքից, սակայն Փաստաբանը դրանց վերաբերյալ կամ առարկայական պատասխան չի տալիս, կամ թողնում է դրանք անպատասխան:

Միաժամանակ, նամակագրությունից հետևում է նաև, որ Դիմողը փաստաբանական հարցում է ուղարկել << վերաքննիչ վարչական դատարան՝ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշման ընդունման մասին տեղեկություններ ստանալու նպատակով, ինչի կապակցությամբ Փաստաբանը փաստացի չի անդրադառնում բողոք ներկայացված չլինելու փաստին, ինչպես նաև չի հերքում դրա ներկայացման հանձնարարությունը ունենալու հանգամանքը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրություններ և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Կանոնագրքի 3.6.1 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը ընտրելու առանձին երկու հիմք:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ,

2) մեկ տարվա ընթացքում երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից կրկին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում, բացառությամբ անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերի.

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, ինչպես նաև որպես փաստաբանի ազատության և անկախության երաշխիք Պալատին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ: Օրենքով Պալատին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Պալատը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Այսպես, Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով Պալատը պարտավորվում է փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվել համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Միաժամանակ, պետք է արձանագրել, Օրենքը նաև սահմանում է փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակի կիրառման համար անհրաժեշտ նախապայմանները:

Դրանց շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում դեպքերն առ այն, երբ

• փաստաբանը դիտավորությամբ կատարում է խախտում, որը պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ, ինչպես նաև

• մեկ տարվա ընթացքում երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանը կրկին ենթարկվում է կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, նշված կանոնից որպես բացառությամբ սահմանված են միայն անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերը:

Տվյալ դեպքում, Փաստաբանը Պալատի Հանձնաժողովի 19.03.2025թ. թիվ ԿԳ/24177-2-Ա, 30.04.2025թ. թիվ ԿԳ-25056-2-Ա և 30.04.2025թ. թիվ ԿԳ-25057-2-Ա որոշումներով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ սույն գործով կրկին ենթակա է կարգապահական պատասխանատվության, ինչը բավարար է Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը կիրառելու համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը մեկ տարվա ընթացքում չորս անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, այն դեպքում, երբ բավական է մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական տույժի ենթարկվելու փաստը: Նման պայմաններում՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում Փաստաբանի նման վարքագիծը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Վերոհիշյալ համատեքստում, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող այլ հանգամանքներին՝

Իրավաչափ նպատակ և համաչափություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով և 5-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի ապացուցումը

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով Պալատին իրավունք է տրվում փաստաբանի գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնել, եթե նրա կողմից կատարվել է դիտավորյալ կարգապահական խախտում, որը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ Փաստաբանը ստանձնելով Դիմող՝ Վարեն Ավետիսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով, ինչի կապակցությամբ Փաստաբանին 03.06.2022 թվականին տրվել է լիազորագիր՝ երեք տարի ժամկետով, որը, ի թիվս այլ իրավասությունների, ներառել է նաև նշված դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Ըստ այդմ, փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի բացակայության պայմաններում, տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կատարել է որոշակի գործողություններ Դիմողի անունից՝ թիվ ԿԴ/2431/02/21, ԿԴ/2465/02/21 և ՎԴ2/0363/05/22 գործերով, սակայն հետագայում Փաստաբանը նշված գործերի շրջանակներում չի մասնակցել որոշ դատական նիստերին, իսկ կայացված դատական ակտերի դեմ չի ներկայացրել բողոքներ:

Մասնավորապես՝

թիվ ԿԴ/2431/02/21 քաղաքացիական գործով 31.10.2024 թվականին կայացված (հրապարակվել է՝ 17.12.2024 թվականին) վճռով պատասխանող՝ Վարեն Ավետիսյանի դեմ ներկայացված հայցը բավարարվել է, սակայն չի բողոքարկվել,

թիվ ԿԴ/2465/02/21 քաղաքացիական գործով 14.03.2025 թվականին կայացված (հրապարակվել է՝ 14.03.2025 թվականին) վճռով պատասխանող՝ Վարեն Ավետիսյանի դեմ ներկայացված հայցը բավարարվել է, սակայն չի բողոքարկվել,

թիվ ՎԴ2/0363/05/22 վարչական գործով 16.09.2024 թվականին կայացված (հրապարակվել է՝ 27.09.2024 թվականին) որոշմամբ գործն ըստ Վարեն Ավետիսյանի հայցի դատարանի կողմից կարճվել է, սակայն չի բողոքարկվել:

Ընդ որում, Դիմողն իր հերթին Փաստաբանից հայցել է տեղեկություն գործերի ընթացքի և դրանցով կայացած դատական ակտերը բողոքարկելու վերաբերյալ, սակայն Փաստաբանը պատշաճ չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատշաճ չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Այս ամենի հաշվառմամբ, փաստաբանը փաստացի չի ներկայացրել որևէ ապացույց կամ դիրքորոշում կարգապահական վարույթի ընթացքում սահմանված ընթացակարգի շրջանակներում, իսկ Հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնած դիրքորոշման հաշվառմամբ գտնում է, որ Դիմողի առջև չէր ունեցել որևէ պարտավորություն դատական ակտերը բողոքարկելու մասով, ինչը որևէ դեպքում չի կարող դիտվել հիմնավոր, քանի որ Դիմողը փաստաբանական հարցում է ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշման ընդունման մասին տեղեկություններ ստանալու նպատակով, ինչի կապակցությամբ Փաստաբանը դատարանի չի

անդրադառնում բողոք ներկայացված չլինելու փաստին, ինչպես նաև չի հերքում դրա ներկայացման հանձնարարությունն ունենալու հանգամանքը:

Հետևաբար՝ Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, սակայն այնուամենայնիվ շարունակել է նույն վարքագիծը:

Կարգապահական խախտման հետևանքները

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Օրենքի 3-րդ հոդվածը նույնպես երաշխավորվում է փաստաբանության անկախությունը:

Ըստ այդ հոդվածի՝ «*Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինականության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.1 կետի համաձայն՝ *իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար*

անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Պալատը գտնում է, որ Օրենքով և Կանոնագրքով նախատեսված **խիստ** սահմանափակումները կոչված են երաշխավորելու անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման համար ամրագրված կառուցակարգերն ու ընթացակարգերը, որոնց հաշվառմամբ միայն փաստաբանը կարող է իրականացնել անձի իրավունքների ու շահերի արդյունավետ պաշտպանություն՝ մատուցելով բարեխիղճ իրավական օգնություն:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ Դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը.* ***«Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»:*** *Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը»:*

Պալատն արձանագրում է, որ անձը զրկված կլինի իրացնելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իր հիմնական իրավունքը, ինչպես նաև չի ունենա պատշաճ վերաբերմունք փաստաբանական ինստիտուտի ու փաստաբանների նկատմամբ, եթե Փաստաբանը չկատարի իր հիմնական իրավապաշտպան առաքելությունը:

Տվյալ դեպքում կարգապահական գործի նյութերով հաստատվել է, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, թողել է վերջինիս առանց անհրաժեշտ պաշտպանության, ինչի արդյունքում Դիմողը փաստացի զրկվել է նշված երեք դատական գործերով կայացված ակտերի բողոքարկումից, ինչպես նաև դրանց հիմքում ընկած իր նյութական իրավունքի իրացման ու պաշտպանության հնարավորությունից:

Փաստաբանի անձը, առկա փոյժերը

Պատասխանողն առաջին անգամ չէ, որ թույլ է տալիս համանման կարգապահական խախտումներ և ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Մասնավորապես, հաշվի առնելով չմարված տույժերը, Փաստաբանը՝

1) Պալատի Հանձնաժողովի 19.03.2025թ. թիվ ԿԳ/24177-2-Ա որոշմամբ «Փաստաբանության մասին» **օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.1.3 ենթակետեր** խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել են՝ «խիստ նկատողություն»՝ որպես հիմնական և «Դեոնթոլոգիա» 4 ա/ժ՝ որպես լրացուցիչ տույժերը,

2) Պալատի Հանձնաժողովի 30.04.2025թ. թիվ ԿԳ-25056-2-Ա որոշմամբ «Փաստաբանության մասին» **օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետեր** խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել են՝ տուգանք՝ 200.000 ՀՀ դրամ՝ որպես հիմնական և «Սնանկության վարույթների առանձնահատկությունները» թեմայով 4 ա/ժ վերապատրաստում՝ որպես լրացուցիչ տույժերը,

3) Պալատի Հանձնաժողովի 30.04.2025թ. թիվ ԿԳ-25057-2-Ա որոշմամբ «Փաստաբանության մասին» **օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետեր** խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել են՝ տուգանք՝ 200.000 ՀՀ դրամ՝ որպես հիմնական և «Սնանկության վարույթների առանձնահատկությունները» թեմայով 4 ա/ժ վերապատրաստում՝ որպես լրացուցիչ տույժերը:

Ամփոփելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյեկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝ հավաստելու համար, որ վերջինիս կողմից կատարված կարգապահական խախտումը դրա կատարման հանգամանքներով ու Դիմողի, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի համար առաջացրած հետևանքներով պայմանավորված՝ համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Ավելին, Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ սույն որոշմամբ հաշվառմամբ 2025 թվականի ընթացքում արդեն 4 անգամ ենթարկվում է կարգապահական պատասխանատվության և նույն կարգապահական խախտման համար՝ 3.5.5 (բարեխիղճ իրավական օգնություն չցուցաբերելը) և 3.6.1 (հանձնարարության ընթացքի մասին վստահորդին կանոնավորապես չտեղեկացնելը և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելը):

Հանձնաժողովը, հատուկ ընդգծում է, որ <u>միայն սույն կարգապահական գործով</u> առկա փաստերն արդեն իսկ բավարար են հաստատված համարելու այն հանգամանքը, որ Փաստաբանի նման վարքագիծը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Պատասխանողի մեղքի բնույթն, աստիճանը, անձը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև 2025 թվականի ընթացքում արդեն 4 անգամ պատասխանատվության ենթարկված լինելու փաստերը, հիմք են նրա նկատմամբ կիրառելու ամենախիստ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժը:

Սույն հանգամանքները վկայում են նաև այն մասին, որ առկա է համաչափություն Պալատի Հանձնաժողովի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 2-րդ մասի և 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանի (արտոնագիր՝ թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Ճալջյան**

Թիվ ԿԳ-25076-2-Ա
29 հոկտեմբերի 2025թ.
ք.Երևան